ԿՈՄՈՒՆԻԶՄԻ ԼԻՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՊՐՈՑԵՍՈՒՄ ԶԱՐԳԱՑԱԾ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏԵՂԻ ՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

ԷԴԻԿ ԱԲԳԱՐՅԱՆ

Զարգացած սոցիալիզմի կառուցման փորձը մեր երկրում վկայում է, որ սոցիալիստական հասարակության թևակոխումը զարգացած սոցիալիզմի աստիճանի, վերջին հաշվով որոշվում է արտադրողական ուժերի զարգացման որակական մի բարձրությամբ, որտեղ սկսվում է անմիջական անցումը տեխնիկայի զարգացման որակական երկրորդ փուլից երրորդին, մեքենայական արտադրությունից՝ կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությանը։ Իսկ եթե նկատի ունենանք, որ այդ անցումն էլ հենց կազմում է արդի գիտատեխնիկական հեղափոխության էությունը կամ, համենայն դեպս, դրա անհրաժեշտ բաղադրամասը[1], ապա կարելի է ասել, որ զարգացած սոցիալիզմը նախապես խարսխվում է արտադրողական ուժերի զարգացման որակական մի բարձրության վրա, որն իրենով նշանավորում է արդի գիտատեխնիկական հեղափոխության նախնական, ցածր աստիճանը։ Ելնելով սրանից, հնարավոր է զարգացած սոցիալիզմի արտադրողական ուժերի նյութատեխնիկական բովանդակությունը, պայմանականորեն և զուտ համառոտագրելու նպատակով, սահմանել արտադրության մասնակի ավտոմատացման հատկանիշով (որը, իհարկե, համատեղվում է արտադրության կոմպլեքսային մեքենայացման հետ)[2], որպես այդ բովանդակության որակական ամենախոր, ամենաէական տարբերիչ գործոնի։

Ինչպես հայտնի է, ձեռքի գործիքներից մեքենաներին անցման կամ առաջին տեխնիկական հեղափոխության նյութական նախադրյալները ստեղծվում են կապիտալիստական մանուֆակտուրայում։ «Մանուֆակտուրային շրջանը,— գրել է Կ. Մարքսը,— պարզեցնում, բարելավում ու բազմապատկում է աշխատանքի գործիքները՝ դրանք հարմարեցնելով մասնագործ բանվորների բացառիկ առանձնացած ֆունկցիաներին։ Դրանով էլ հենց նա ստեղծում է մեքենայի նյութական նախադրյալներից մեկը, մեքենայի, որը բազմաթիվ պարզ գործիքների կոմբինացիա է»[3]։ Մի խոսքով, անցումը ձեռքի գործիքներից մեքենաներին նախապես պահանջում է առաջինների զարգացման իմանենտ ձևի՝ աշխատանքի բաժանման, որակական նոր աստիճան՝ ի դեմս աշխատանքի մանուֆակտուրային կամ եզակի բաժանման[4]։ Ճիշտ այդպես էլ, մեքենայական արտադրությունից կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությանն անցումը նախապես պահանջում է առաջինի զարգացման իմանենտ ձևի՝ արտադրության կոնցենտրացման որակական նոր աստիճան, որը նշանավորում են արտադրական միավորումները[5]։ Հենց խոշոր արտադրական միավորումներն էլ աշխատանքի և արտադրության կազմակերպման այն ձևն են, որի շրջանակներում էլ ստեղծվում են մեքենայական արտադրությունից կոմպլեքսային-

---

1 *Տե՛ս, օրինակ,* «Социализм: диалектика развития производительных сил и производственных отношений», М., 1975, с. 77.

2 «Капитал» К. Маркса и экономические проблемы развитого социализма», М., 1980, с. 30.

3 *Կ. Մարքս, Կապիտալ, Երևան, 1954, հ. 1, էջ 359—360։*

4 *Վ. Ի. Լենին, Նկտ, հ. 3, էջ 534—537։*

5 *«Միավորումները որակապես նոր երևույթ են արդյունաբերական արտադրության կառավարման գործում։ Դրանք ոչ թե ձեռնարկությունների մեխանիկական միացում են, այլ միասնական արտադրատնտեսական կոմպլեքս, որտեղ օրգանապես միաձուլված են գիտությունն ու արտադրությունը, լայնորեն զարգացած են մասնագիտացումն ու կոոպերացումը» («ՍՄԿԿ XXV համագումարի նյութերը», Երևան, 1976, էջ 194)։*

ավտոմատացված ու անցման կամ արդի գիտատեխնիկական հեղափոխության նյութական նախադրյալներն այն դեպքում, երբ համեմատաբար մանր, ինքնուրույն ձեռնարկություններն «ընդունակ չեն լուծելու գիտատեխնիկական առաջադիմության խնդիրները»[6]։

Արտադրական, գիտաարտադրական և ագրոարդյունաբերական խոշոր միավորումները, ստեղծելով գիտատեխնիկական հեղափոխության նախադրյալները (մի բան, որը հստակորեն արտահայտվում է ժամանակակից արտադրության ավտոմատացման, առայժմ՝ մասնակի ավտոմատացման պրոցեսում), միաժամանակ պայմանավորում են անցումը սոցիալիստական հասարակության վաղ, ոչ հասուն աստիճանից զարգացած սոցիալիզմին։ Ինչպես իրավացիորեն նշում են որոշ հեղինակներ, «արտադրության մասշտաբների աճն առաջ է բերում... արտադրական հարաբերությունների մասնակի կատարելագործման անհրաժեշտություն»[7]։ *Իսկ տվյալ դեպքում ի դեմս միավորումների մենք գործ ունենք ոչ թե պարզապես արտադրության մասշտաբների աճի, այլ խոշոր մասշտաբներով արտադրության* որակական նոր *բարձրության հետ, որն ըստ այդմ էլ պահանջում է սոցիալիստական արտադրական հարաբերությունների ոչ թե պարզապես կատարելագործում, այլ որակական նոր աստիճան։ Մի խոսքով, սոցիալիստական արտադրական կամ սեփականության հարաբերությունների զարգացումը, անցումը զարգացած սոցիալիզմին* անմիջականորեն *որոշվում է աշխատանքի և արտադրության կազմակերպման որակական փոփոխություններով՝ վերջիններիս հասարակական բնույթի զարգացման ուղղությամբ։ Այսինքն՝ զարգացած սոցիալիզմին անցման և նրա հետագա կատարելագործման պրոցեսում անմիջականորեն «որոշիչ գործոն է հանդիսանում աշխատանքի և արտադրության հասարակական բնույթի զարգացումը»*[8]։

Եվ այսպես, զարգացած սոցիալիզմը որպես սոցիալիստական հասարակության առաջադիմության որակական նոր աստիճան նախապես խարսխվում է արտադրողական ուժերի զարգացման որակական մի բարձրության վրա, որին ձևի կամ աշխատանքի և արտադրության կազմակերպման տեսակետից բնորոշ են նախ և առաջ արտադրական խոշոր միավորումները, որոնք նշանավորում են արտադրության կոնցենտրացման (և մասնագիտացման) որակական նոր աստիճան, իսկ բովանդակության *տեսակետից՝ հատկապես արտադրության մասնակի ավտոմատացումը, որը նշանավորում է մեքենայական արտադրությունից կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությանն անցման սկիզբը։ Ընդ որում, արտադրության մասնակի ավտոմատացումը տեխնիկայի զարգացման որակական ինչ որ նոր, ինքնուրույն փուլ չէ։ Ընդհակառակը, չնայած նյութատեխնիկական բաղխում կատարված որակական տեղաշարժերին, զարգացած սոցիալիզմը «շարունակում է մնալ խոշոր մեքենայական արտադրության պատմական շրջանակներում»*[9]։

Հետազոտողներից փաստորեն և ոչ մեկը չի կասկածում այն բանում, որ անցումը սոցիալիստական հասարակության առաջադիմության որակական բարձր աստիճանին՝ զարգացած սոցիալիզմին, վերջին հաշվով որոշվում է արտադրողական ուժերի և՛ ձևի, և՛ բովանդակության որակական փոփոխություններով։ Այլ կերպ ասած, բոլորն էլ փաստորեն համաձայն են, որ արտադրողական ուժերի զարգացման մակարդակին արտադրական հարաբերությունների համապատասխանության օրենքը «գործում է ոչ միայն հասարակական-տնտեսական մի ֆորմացիայից մյուսին անցման ժամանակ, այլև դրանցից յուրա-

---

6 «Совершенствование социалистических производственных отношений и эффективность производства», М., 1980, с. 15.

7 *Նույն տեղում, էջ 19։*

8 «Социализм: диалектика развития производственных сил и производственных отношений», с. 268.

9 «Капитал» К. Маркса и экономические проблемы развитого социализма», с. 29.

քանչյուրի ներսում»[10], տվյալ դեպքում, նաև կոմունիստական ֆորմացիայի ներսում։ Սրանում չկասկածելու համար այսօր առկա է պատմական բավարար փորձ։ Կասկածները սկսվում և կարծիքները բաժանվում են այն ժամանակ, երբ հարց է դրվում, թե ինչ չափանիշով է որոշվում զարգացած սոցիալիզմի տեղը սոցիալիստական հասարակության առաջադիմության սանդուղքում։ Այս հարցը հաճախ լուծվում է հօգուտ տարբեր կարգի չափանիշների կոմպլեքսի[11]։

Սոցիալիստական հասարակության առաջադիմության չափանիշի կոմպլեքսային ըմբռնումը, անշուշտ, պարունակում է ռացիոնալ հատիկ։ Դա արտահայտվում է և այն փաստի ամրագրման մեջ, որ սոցիալիզմի առաջադիմությունը, նրա հասունությունը որոշվում է հասարակական կյանքի տարբեր կողմերի կամ գործոնների (տնտեսական, քաղաքական, սոցիալական, բարոյական և այլն) փոխազդեցությամբ, և այն պնդման մեջ, որ որակական տվյալ աստիճանում գտնվող սոցիալիստական հասարակության առաջադիմականությունն իր ողջ հարստությամբ ու բազմազանությամբ կարող է երևան գալ միայն տարբեր՝ բազիսային և վերնաշենքային կարգի չափանիշների կոմպլեքսով։ Այնուամենայնիվ, այս ըմբռնումը ստվերում է թողնում այն հանգամանքը, որ սոցիալիզմի հասունության գործոնները «միմյանց նկատմամբ գտնվում են ոչ միայն կոորդինացիայի, այլև սուբորդինացիայի, ենթակայության հարաբերությունների մեջ, այսինքն՝ կազմում են որոշակի աստիճանակարգ»[12]։ Եվ միանգամայն իրավացի է Ա. Պոկրիտանը, գտնելով, որ «Զարգացած սոցիալիզմը բնութագրվում է արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների որոշակի վիճակով, սոցիալ-դասակարգային յուրահատուկ կառուցվածքով, հասարակության առանձնահատուկ քաղաքական կազմակերպումով և բազմաթիվ այլ հատկանիշներով։ Սակայն, երբ խոսքը ամբողջությամբ վերցրած կոմունիստական հասարակության ձևավորման պրոցեսում այդ փուլի պատմական տեղի մասին է, ապա խնդիրն այն է, որ առանձնացվի որոշիչ չափանիշ»[13]։ Իսկ նման չափանիշի դերում հանդես է գալիս արտադրողական ուժերի զարգացման որոշակի աստիճանը կամ վիճակը, որն էլ հենց ընկած է սոցիալիստական հասարակության հասունության տարբեր գործոնների աստիճանակարգի հիմքում։

Ինչպես ընդգծել է Յու. Վ. Անդրոպովը, պատասխանելու համար այն հարցին, թե «ինչ է սոցիալիզմը», ամենից առաջ պետք է դիմել մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների աշխատություններին[14]։ Ընդ որում, խնդիրը դրվում է յայն իմաստով, այսպես կոչված երկու տեսանկյունով։ Եթե դրանցից առաջինը վերաբերում է այն բանին, որ տվյալ դեպքում պետք է անմիջականորեն ելնել սոցիալիզմի այն ըմբռնումից, որը շարադրված է հենց Կ. Մարքսի, Ֆ. Էնգելսի և Վ. Ի. Լենինի աշխատություններում, ապա առաջադրված խնդրի երկրորդ տեսանկյունը վերաբերվում է նրան, որ այսօր էլ որպես սոցիալիզմի տնտեսական կյանքի հետազոտության սկզբունք պետք է ծառայեցնել կապիտալիզմի հետազոտության մարքսյան մեթոդը, քանի որ սոցիալիզմի «տնտեսական կյանքի երևույթների էության մեջ խորապես թափանցելու մշտավառ օրինակ եղել ու մնում է Մարքսի «Կապիտալը»[15]։

Այն համոզիչ ցույց է տալիս, որ կապիտալիստական ֆորմացիայի առաջադիմության սանդուղքում որակական տվյալ փուլի տեղը վերջին հաշվով

---

10 «Совершенствование социалистических производственных отношений и эффективность производства», с. 12.

11 Տե՛ս, օրինակ, «Развитое социалистическое общество: сущность, критерии зрелости, критика ревизионистских концепций», М., 1979, с. 27.

12 Р. И. Косолапов, Социализм (к вопросам теории), М., 1979, с. 489.

13 А. К. Покрытан, Историческое и логическое в экономической теории социализма, М., 1978, с. 177.

14 «Լենինյան ուղիով», 1983, № 3, էջ 15—16։

15 Նույն տեղում, էջ 17։

որոշվում է նրանով, թե արտադրողական ուժերի զարգացման որակական ինչպիսի աստիճանի վրա է այն խարսխվում։ Ուստի և, քանի դեռ խոսքը կապիտալիզմի որակական ստադիաների պարբերացման մասին է, բոլոր հեղինակներն ըստ էության համաձայն են, որ այդ պարբերացման հիմնական չափանիշը, իրոք, արտադրողական ուժերի զարգացման աստիճանն է։ Բայց երբ հասարակական առաջադիմության չափանիշի հարցը տեղափոխվում է սոցիալիզմի բնագավառ, որոշ հետազոտողներ, դադարելով արտադրողական ուժերի զարգացման աստիճանը սոցիալիզմի առաջադիմության հիմնական կամ որոշիչ չափանիշ համարել, առաջարկում են այն լրացնել բազմաթիվ հավասարարժեք այլ չափանիշներով[16]։ Այսպիսով, ակամա «մոռացության» է տրվում այն հանգամանքը, որ տվյալ դեպքում խոսքը սոցիալիզմի նկատմամբ կապիտալիզմի մարքսյան վերլուծության արմատական սկզբունքների տարածման մասին է։ Մինչդեռ, Կ. Մարքսի «Կապիտալը» իր գիտական և մեթոդոլոգիական նշանակությունը չի կորցրել նաև զարգացած սոցիալիզմի պայմաններում։ Այն պետք է մնա որպես կոմունիստական արտադրաեղանակի լինելիության օրինաչափությունների հետազոտության ելակետային հիմք»[17]։

Այստեղ, թերևս, բացասական դեր է խաղում նաև այն հանգամանքը, որ երբեմն արտադրողական ուժերի զարգացման աստիճանը որպես սոցիալիզմի նկատմամբ որոշիչ չափանիշ կիրառվում է ոչ այնքան հաջող։ Ինչպես հայտնի է, արդի սոցիալիզմի նյութատեխնիկական բազիսը, որը մենք զուտ պայմանականորեն սահմանում ենք արտադրության մասնակի ավտոմատացման հատկանիշով, չմոռանալով, որ նրա լայն հիմքը մնում է մեքենայական արտադրությունը, որակապես չի տարբերվում նյութատեխնիկական այն բազիսից, որի վրա խարսխվում է արդի կապիտալիզմը։ Այս իմաստով, մասնակի ավտոմատացված արտադրությունը կապիտալիզմի վերջին խոսքն է։ Ելնելով սրանից, բուլղարացի փիլիսոփա Ն. Իրիբաջակովը գտնում է, որ զարգացած սոցիալիզմը, ի տարբերություն ոչ հասունի, սկզբից ևեթ խարսխվում է ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա, դրանով իսկ ենթադրելով, որ մասնակի ավտոմատացված արտադրությունը որպես արդի կապիտալիզմի վերջին խոսք ադեկվատ է սոցիալիզմին։ Բանն այն է, որ դրանով իսկ այս կամ այն նյութատեխնիկական բազիսի ադեկվատությունը սոցիալիզմին՝ նա ուղղակի կախման մեջ է դնում կապիտալիզմի «վերջին խոսքից»։ Ընդ որում, ըստ նրա, քանի որ կապիտալիզմի «վերջին խոսքը» փոփոխական է, այսինքն՝ տարբեր ժամանակներում այլ է, ուրեմն, փոփոխական է նաև սոցիալիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսը[18]։ Փաստորեն, Ն. Իրիբաջակովի կարծիքով, եթե սոցիալիզմը հաղթանակեր XIX դ. վերջի բարձր զարգացած կապիտալիստական երկրներում, ապա նրան ադեկվատ նյութատեխնիկական բազիսը կլիներ մեքենայական արտադրությունը որպես այդ շրջանի կապիտալիզմի «վերջին խոսք», իսկ այսօր սոցիալիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսը մասնակի ավտոմատացված արտադրությունն է, որովհետև հենց դա է արդի կապիտալիզմի «վերջին խոսքը»։ Այսպիսով, նա սոցիալիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսը բնորոշում է այնքան հեղհեղուկ, որ այն զրկում է որակական ամեն մի որոշակիությունից։

Տվյալ դեպքում հարցը հետևյալն է. արդյո՞ք զարգացած սոցիալիզմը նախապես խարսխվո՞ւմ է ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա։ Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է վերադառնալ մեքենայական արտադրության՝ որպես կապիտալիզմի ադեկվատ նյութատեխնիկական բազիսի, մարքսյան ըմբռնմանը։ Հայտնի է, որ ըստ Կ. Մարքսի, կապիտալիզմը մանուֆակտուրայինից խոշոր մեքենայական արդյունաբերության փուլ է թևակոխում ավելի վաղ, քան կանգնում է սեփական ոտքերի կամ ադեկվատ

---

16 Տե՛ս, օրինակ, «Характерные черты и особенности развитого социалистического общества», Киев, 1976, с. 17.

17 «Капитал» К. Маркса и экономические проблемы развитого социализма», с. 151.

18 Н. Ирибаджаков. Развитое социалистическое общество. М., 1974, с. 87.

նյութատեխնիկական բազիսի վրա։ Բանն այն է, որ կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը նախապես խարսխվում է այն մեքենաների վրա, որոնք արտադրվում են ձեռքի գործիքներով։ Այլ կերպ ասած, «մեքենայական արտադրությունը սկզբում ծագեց իրեն չհամապատասխանող նյութական բազիսի վրա»[19]։ Իսկ կապիտալիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսի մասին խոսք չի կարող լինել այնտեղ, որտեղ մեքենաների արտադրության տեխնիկական բազիսը ձեռքի գործիքներն են։ Կապիտալիզմն իրեն ադեկվատ նյութատեխնիկական բազիսին տիրանում է ավելի ուշ, միայն այն ժամանակ, երբ որպես առաջին տեխնիկական հեղափոխության արդյունք վերջնականապես տեղի է ունենում անցում ձեռքի գործիքներից մեքենաներին, այսինքն՝ երբ մեքենաները սկսում են արտադրվել մեքենաների միջոցով[20]։ Ընդ որում, եթե մինչ այդ կապիտալիստական խոշոր արդյունաբերությունը խարսխվում էր մեքենաների մասնակի կիրառման վրա, ապա շնորհիվ առաջին տեխնիկական հեղափոխության, այն սկսում է հենվել մեքենաների մասսայական կիրառման վրա։

Ճիշտ այդպես էլ, կոմունիստական ֆորմացիան իր զարգացման սոցիալիզմի աստիճանն է թևակոխում ավելի վաղ, քան կանգնում է սեփական ոտքերի կամ ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա։ Բանն այն է, որ զարգացած սոցիալիզմը իր նախնական փուլերում խարսխվում է այն ավտոմատների վրա, որոնք արտադրվում են մեքենաներով։ Մի խոսքով, ավտոմատացված արտադրությունը նախապես առաջանում է ոչ համապատասխան հիմքի վրա։ Իսկ կոմունիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսի մասին խոսք չի կարող լինել այնտեղ, որտեղ ավտոմատների արտադրության տեխնիկական բազիսը մեքենաներն են։ Կոմունիստական ֆորմացիան իրեն ադեկվատ նյութատեխնիկական բազիսին տիրանում է ավելի ուշ, երբ ավտոմատներն սկսում են արտադրվել ավտոմատների միջոցով, երբ որպես արդի գիտատեխնիկական հեղափոխության արդյունք վերջնականապես տեղի է ունենում անցում մեքենայական արտադրությունից ավտոմատացվածին, այսինքն՝ տեխնիկայի զարգացման որակական երրորդ փուլին։ Այս անցման ռեալ սկիզբը նշանավորում է հենց արտադրության մասնակի ավտոմատացումը, իսկ ավարտը՝ կոմպլեքսային ավտոմատացված արտադրությունը։ Ընդ որում, «մասնակի ավտոմատացում» և «կոմպլեքսային ավտոմատացում» հասկացություններն արտահայտում են ոչ միայն սոսկ արտադրության ավտոմատացման ընդգրկման մասշտաբները։ Դրանք նշանավորում են նաև արտադրության ավտոմատացման համապատասխանաբար ցածր փուլը, որտեղ ավտոմատների արտադրության տեխնիկական բազիսը մեքենան է, որի պատճառով էլ այստեղ հնարավոր է միայն արտադրության մասնակի ավտոմատացում, և բարձր աստիճանը, որտեղ ավտոմատի արտադրության տեխնիկական բազիսը ավտոմատն է, որի շնորհիվ էլ այստեղ գործ ունենք ավտոմատների մասսայական կիրառման և արտադրության կոմպլեքսային ավտոմատացման հետ։

Եվ այսպես, այն հանգամանքը, որ զարգացած սոցիալիզմը նախապես խարսխվում է ոչ ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա, ճիշտ այնպես, ինչպես նրա նախորդ՝ ոչ հասուն աստիճանը, ի դեմս մեքենայական արտադրության, ինքնին նշանակում է, որ սոցիալիզմի որակական աստիճանները չէն կարող պարբերացվել ըստ նյութատեխնիկական բազիսի ադեկվատության հատկանիշի, ինչպես դա փորձում է անել Ն. Իրիբաջակովը[21]։ Իրականում զարգացած սոցիալիզմը առաջադիմության որակական ավելի բարձր աստիճան է նշանավորում, քան սոցիալիզմի որակական առաջին, ոչ հասուն աստիճանն է։ Եվ դա ոչ թե այն պատճառով, որ իբր խարսխվում է ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա, այլ շնորհիվ այն բանի, որ հենվում է արտադրողական ուժերի զարգացման որակական ավելի բարձր աստիճանի վրա։ Վերջին հաշվով

---

19 Կ. Մարքս, Կապիտալ, հ. 1, էջ 401։

20 Նույն տեղում, էջ 403—404։

21 Н. Ирибаджаков, նշվ. աշխ., էջ 75։

զարգացած սոցիալիզմը հենվում է արտադրողական ուժերի զարգացման որակական ավելի բարձր աստիճանի վրա, քան այն է, որ ընկած է կապիտալիզմի վերջին, փուլի՝ մոնոպոլիստական կապիտալի հիմքում։

Արտադրության մասնակի ավտոմատացումը ոչ թե սոսկ արդի կապիտալիզմի, այլ ընդհանրապես կապիտալիզմի վերջին խոսքն է հասարակության նյութատեխնիկական բազիսի զարգացման մեջ, որքանով, ինչպես հայտնի է, վերջնականապես անցումը կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությանը, այսինքն՝ գիտատեխնիկական հեղափոխության լրիվ իրագործումը սեփականության կապիտալիստական ձևի շրջանակներում բացառվում է։ Սրանում համոզվելու համար բավական է նկատի ունենալ թեկուզ միայն հետևյալը։

Ինչպես ցույց է տվել Կ. Մարքսը, ձեռքի գործիքներից մեքենաներին վերջնական անցումը պահանջում է աշխատանքի և արտադրության կազմակերպման այնպիսի նոր ձև, ինչպիսին կապիտալիստական խոշոր արդյունաբերությունն (ֆաբրիկան) է։ Ճիշտ այդպես էլ, վերջնական անցումը մեքենայական արտադրությունից կոմպլեքսային ավտոմատացված արտադրությանը, պահանջում է աշխատանքի կազմակերպման այնպիսի նոր ձև, ինչպիսին համաժողովրդական կոոպերացիան է, այսինքն՝ աշխատանքի կոոպերացիան ոչ թե ինքնուրույն ձեռնարկությունների կամ նույնիսկ ձեռնարկությունների կոմպլեքսի շրջանակներում, այլ ամբողջ հասարակության մասշտաբով։ «Տեխնիկական հեղաշրջումները,— գրել է Ա. Պոկրիտանը,— ոչ մի դեպքում չեն կարող իրագործվել իրենց բնույթին ներհատուկ աշխատանքի կազմակերպման ձևից դուրս։ Համաժողովրդական կոոպերացիան հենց այն անհրաժեշտ ձևն է, միայն որի շրջանակներում էլ կարող է զարգանալ և իրագործվել գիտատեխնիկական հեղափոխությունը»[22]։ Հավանաբար ապացուցման կարիք չի զգում այն պարզ ճշմարտությունը, որ կապիտալիզմը շնչից իսկ մերժում է աշխատանքի համաժողովրդական կոոպերացիայի, դրանով իսկ՝ գիտատեխնիկական հեղափոխության իրագործման հնարավորությունը, որքանով որ «կապիտալիստական մասնավոր սեփականությունը, նույնիսկ իր պետական-մոնոպոլիստական ձևում, չի կարող ամբողջ հասարակական արտադրությանը հաղորդել տնտեսական միասնություն»[23]։

Եթե արտադրության մասնակի ավտոմատացումը հայտնի իմաստով առհասարակ կապիտալիզմի վերջին խոսքն է, ապա արդի գիտատեխնիկական հեղափոխության նույն այդ նվաճումը սոցիալիստական արտադրական հարաբերությունների սահմաններում նշանավորում է արտադրողական ուժերի զարգացման միայն այն նվազագույն որակական բարձրությունը, որն ընկած է զարգացած սոցիալիզմի նախնական փուլի հիմքում։ Արդեն այս փաստը գալիս է հաստատելու, որ զարգացած սոցիալիզմը, որպես որակական տարբեր աստիճաններով անցնող «տևական փուլ», ամբողջությամբ վերցրած խարսխվում է արտադրողական ուժերի զարգացման որակական ավելի բարձր աստիճանի վրա, քան կապիտալիզմի վերջին փուլը։ Արտադրողական ուժերի զարգացման այդ աստիճանի առավելագույն որակական բարձրությունը, որտեղ փաստորեն զարգացած սոցիալիզմին փոխարինելու է գալիս բուն կոմունիզմը, բնութագրվում է արտադրության կոմպլեքսային ավտոմատացումով։

Մի խոսքով, զարգացած սոցիալիզմի արտադրողական ուժերի զարգացման աստիճանն իր նվազագույն և առավելագույն սահմաններում ըստ էության համընկնում է գիտատեխնիկական հեղափոխության ծավալման ողջ ընթացքի հետ՝ նրա արդի, ցածր փուլից ընդհուպ մինչև վերջնական անցումը կոմպլեքսային ավտոմատացված արտադրությանը։

Բնականաբար, որոշել զարգացած սոցիալիզմի տեղը կոմունիզմի լինելիության պրոցեսում, նշանակում է պարզել նրա հարաբերությունը սոցիալիստական հասարակության առաջադիմության ոչ միայն նախորդ, այլև նաև ներկա աստիճանի հետ, եթե այդպիսին կա։ Ավելին, միայն առաջադիմության որո-

---

22 А. К. Покрытан, նշվ. աշխ., էջ 202։

23 Р. Г. Вартанов, Социализм: ступени развития, Ереван, 1982, с. 202.

շակի չափանիշի հիման վրա կարելի է կանխատեսել սոցիալիզմի առաջադիմության այդ հաջորդ աստիճանի գոյությունը։ Արտադրողական ուժերի զարգացման աստիճանը որպես որոշիչ չափանիշ թույլ է տալիս ենթադրել, որ զարգացած սոցիալիզմի և բուն կոմունիզմի միջև սոցիալիզմի առաջադիմության որակական այլ աստիճան չկա[24]։

Որոշ հեղինակների կարծիքով զարգացած սոցիալիզմին հաջորդելու է դա-չիս սոցիալիզմի ևս մի, առավել զարգացած աստիճան, որը, Ռ. Վարդանովը, օրինակ, պայմանականորեն բնորոշում է որպես «բարձր զարգացած սոցիալիստական հասարակություն»[25]։ Այս տեսակետի հիմքում ընկած կարևոր փաստարկներից մեկը (եթե ոչ կարևորագույնը) այն է, որ ի տարբերություն զարգացած սոցիալիզմի, «բարձր զարգացած սոցիալիզմը» որպես սոցիալիստական հասարակության առաջադիմության նոր աստիճան, արդեն անդասակարգ հասարակարգ է։ Առարկելով այն գիտնականներին, որոնց կարծիքով դասակարգերը կմահանան հենց զարգացած սոցիալիզմի շրջանակներում, Ռ. Վարդանովը գրել է. «Եթե և՛ դասակարգային, և՛ արդեն ոչ-դասակարգային հասարակությունները հասունության միևնույն աստիճանն են, ապա հազիվ թե բանական է առհասարակ խոսել սոցիալիզմի հասունության, զարգացման աստիճանների՝ որպես տեսական և գործնական պրոբլեմի մասին»[26]։ Բայց ոչ ոք չի ժխտում, որ հենց զարգացած սոցիալիստական հասարակությունն է կոչված լուծելու բուն կոմունիզմի կառուցման խնդիրները և դրանց շարքում նախ և առաջ կոմունիզմի նյութատեխնիկական բազիսի ստեղծման խնդիրը։ Սա չի ժխտում նաև Ռ. Վարդանովը[27]։ Մինչդեռ զարգացած սոցիալիզմից հետո սոցիալիստական հասարակության առաջադիմության նոր աստիճանի գոյության ընդունումից կամա թե ակամա հետևում է, որ «զարգացած սոցիալիստական հասարակությունը լուծում է ոչ թե անմիջականորեն կոմունիզմի (առաջին հերթին կոմունիզմի նյութատեխնիկական բազայի) կառուցման խնդիրները, այլ սոցիալիզմի ևս մի, հատուկ աստիճանի խնդիրները»[28]։ Բանն այն է, որ կամ պետք է համաձայնել, որ հենց զարգացած սոցիալիզմն է կոչված լուծելու կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման խնդիրը և այս դեպքում նշված տեսակետը գոնե տրամաբանորեն հիմնավորված չէ, կամ էլ ընդունել, որ զարգացած սոցիալիզմը կոչված չէ լուծելու նույն այդ խնդիրը և այս դեպքում տրամաբանական է ենթադրել սոցիալիզմի ինչ-որ նոր որակական աստիճանի գոյությունը զարգացած սոցիալիզմի և բուն կոմունիզմի միջև։

Իրականում զարգացած սոցիալիզմը սոցիալիստական հասարակության առաջադիմության հենց այն աստիճանն է, որտեղ, մի կողմից, լրիվ բացահայտվում են սոցիալիզմի բոլոր հնարավորությունները, իսկ մյուս կողմից՝ ստեղծվում են բուն կոմունիզմին անցման նյութական և հոգևոր նախադրյալները։ Այլ կերպ ասած, զարգացած սոցիալիզմը սոցիալիստական հասարակության առաջադիմության բարձրագույն աստիճանն է, որքան էլ այն տևական լինի։ Ինչ վերաբերում է դասակարգերի մահացմանը, ապա որքանով կոմունիզմի նյութատեխնիկական բազիսը կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունն է որպես արդի գիտատեխնիկական հեղափոխության վերջնական արդյունք[29], որքանով զարգացած սոցիալիզմի արտադրողական ուժերի զարգացման որակական աստիճանը իր նվազագույն և առավելագույն սահմաններում համընկնում է գիտատեխնիկական հեղափոխության ծավալման ողջ ընթացքին, այդքանով ճիշտ է ենթադրել, որ դասակարգերի մահացումը, որը վերջին հաշվով որոշվում է արդի գիտատեխնիկական հեղափոխության նվա-

---

24 «Развитой социализм: проблемы теории и критики», М., 1980, с. 62—63.

25 Р. Г. Вартанов, նշվ. աշխ., էջ 197։

26 Նույն տեղում, էջ 195։

27 Նույն տեղում, էջ 183։

28 «Марксистско-ленинское учение о социализме и современность», М., 1975, с. 164.

29 Տե՛ս, օրինակ, С. С. Товмасян, Качественные фазы развития техники и современная научно-техническая революция, Ереван, 1970, с. 94.

ճումների հետ սոցիալիստական կարգերի առավելությունների միացումով, տեղի կունենա կոմունիզմի նյութատեխնիկական բազիսի ստեղծման ճանապարհին, այսինքն՝ զարգացած սոցիալիզմի շրջանակներում։ Ինչպես նշեց ՍՄԿԿ XXVI համագումարը, հենվելով մեր հասարակության զարգացման վերջին տասնամյակի փորձի վրա, «կարելի է ենթադրել, որ հասարակության անդասակարգ կառուցվածքի կազմավորումը գլխավորապես և հիմնականում տեղի կունենա հասուն սոցիալիզմի պատմական շրջանակներում»[30]։

Չնայած զարգացած սոցիալիզմը սոցիալիստական հասարակության առաջադիմության բարձրագույն աստիճանն է, այնուամենայնիվ, լինելով հենց սոցիալիզմի բարձրագույն աստիճան, այն շարունակում է մնալ որպես ոչ լրիվ կոմունիզմ[31]։ Սա նշանակում է, որ զարգացած սոցիալիզմի աստիճանում կոմունիստական ֆորմացիան դեռևս չի բացահայտում իսկական հասարակական առաջադիմության իր ողջ էությունը։ Դրա համար այն պետք է թևակոխի իր բարձրագույն՝ բուն կոմունիզմի փուլը, որտեղ կոմունիստական ֆորմացիան ի դեմս կոմպլեքսային-ավտոմատացված արտադրության խարսխվում է ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա։ Ինչպես նշել է Ս. Թովմասյանը, «Կոմունիստական հասարակությունը միայն այդ հիմքի վրա կարող է մինչև վերջ իրագործել իր հիմնական սոցիալական և տնտեսական խնդիրները»[32]։

Ելնելով մեքենայական արտադրության, որպես կապիտալիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսի մարքսյան բնորոշումից, դժվար չէ համոզվել, որ, իրոք, հենց կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունն է կոմունիստական ֆորմացիային ադեկվատ նյութատեխնիկական բազիսը։ Այն է. առաջին, կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունը նշանավորում է տեխնիկայի զարգացման որակական նոր փուլ, որը բացառում է կապիտալիզմի գոյությունը ճիշտ այնպես, ինչպես մեքենայական արտադրությունն է բացառում ֆեոդալիզմի գոյության հնարավորությունը։ Զևափոխելով Կ. Մարքսի հանրահայտ միտքն այն մասին, որ ձեռնաղացը մեզ տալիս է հասարակություն սյուզերենի գլխավորությամբ, իսկ շոգեաղացը՝ հասարակություն արդյունաբերական կապիտալիստի գլխավորությամբ[33], կարող ենք ասել, որ մեքենայական արտադրությունը մեզ տալիս է հասարակություն կապիտալիստի գլխավորությամբ, իսկ կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունը՝ կոմունիստական հասարակություն։

Երկրորդ, կոմունիստական ֆորմացիան ինքն է ստեղծում կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունը, որը, ըստ այդմ էլ հանդես է գալիս որպես նրա սեփական հիմք, ճիշտ այնպես, ինչպես կապիտալիզմն ինքն է ստեղծում մեքենայական արտադրությունը, որպես իր սեփական հիմք։ Ընդ որում, քանի որ կոմպլեքսային-ավտոմատացված արտադրությունը որպես նյութատեխնիկական բազիս կոմունիստական հասարակությունը չի կարող ժառանգել կապիտալիզմից (դրա ստեղծումը հենց զարգացած սոցիալիզմի անմիջական խնդիրն է), ապա «հասուն սոցիալիզմի կառուցման և նրա կատարելագործման էտապը հանդես է գալիս որպես օբյեկտիվ օրինաչափություն, որպես սոցիալ-տնտեսական առաջադիմության անհրաժեշտ աստիճան կոմունիստական ֆորմացիայի առաջին փուլի շրջանակներում»[34]։

Երրորդ, կոմունիստական ֆորմացիան կապիտալիզմի նկատմամբ վերջնական հաղթանակ է տանում հենց կոմպլեքսային-ավտոմատացված արտադրության բազիսի վրա, ճիշտ այնպես, ինչպես կապիտալիզմն է ֆեոդալիզմի նկատմամբ վերջնական հաղթանակ տանում հենց մեքենաների մեքենայական արտադրության բազիսի վրա։

---

30 «ՍՄԿԿ XXVI համագումարի նյութերը», Երևան, 1981, էջ 86։

31 «ՍՄԿԿ Կենտկոմի պլենումի նյութերը», 14—15 հունիսի, 1983 թ., Երևան, 1983, էջ 13—14։

32 С. С. Товмасян, նշվ. աշխ., էջ 94։

33 К. Маркс, Ф. Энгельс, Соч., т. 4, с. 133.

34 «Развитой социализм: проблемы теории и практики», с. 64.

Կոմունիստական շինարարության խնդիրների համակարգում, որ կոչված է լուծելու զարգացած սոցիալիզմը, անկասկած, ամենակարևորը, ամենաէականը կոմունիզմին ադեկվատ նյութատեխնիկական բազիսի ստեղծման խնդիրն է։ Բանն այն է, որ կոմունիստական հասարակությունն իր առաջադիմության ճանապարհին լիովին բացահայտում է հասարակական առաջադիմության, մարդկության իսկական պատմության մեջ իր ողջ էությունը միայն այն բանից հետո, երբ կանգնում է սեփական ոտքերի կամ ադեկվատ նյութատեխնիկական բազիսի վրա, այսինքն՝ իր զարգացման բարձրագույն փուլում, երբ «հասարակությունը կկարողանա իր դրոշի վրա գրել. «Յուրաքանչյուրն՝ ըստ իր ընդունակությունների, յուրաքանչյուրին՝ ըստ նրա պահանջմունքների»[35]։

К ВОПРОСУ ОПРЕДЕЛЕНИЯ МЕСТА РАЗВИТОГО СОЦИАЛИЗМА В ПРОЦЕССЕ СТАНОВЛЕНИЯ КОММУНИЗМА

ЭДИК АБГАРЯН

Резюме

Не отрицая значения комплексного критерия, следует тем не менее придерживаться точки зрения, согласно которой, основным критерием определения места развитого социализма в процессе становления коммунистического общества является степень развития производительных сил.

Развитие производительных сил развитого социализма, в своих минимальных и максимальных границах, по существу, совпадает с границами НТР, окончательным результатом которой, в лице комплексно-автоматизированного производства, является создание адекватной материально-технической базы коммунизма. Тот же критерий позволяет утверждать, в противовес мнению некоторых авторов, что развитой социализм является *наивысшей* ступенью прогресса социалистического общества.

35 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, հ. 3, Երևան, 1978, էջ 17։